

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2023 թվականի  
հունվարի 19-ին կայացած գիտական Խորհրդի N6 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 28-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

1. 2022/2023 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում

/զեկ. փոխդեկան Ք.Ս.Սարգիս/

2. Ակադեմիկոս Գևորգ Տեր-Ստեփանյանի անվան կրթաթոշակի թեկնածուների առաջադրում

/զեկ. փոխդեկան Վ.Պ.Վարդանյան/

3. «Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ

/զեկ. ամբ.վարիչ Ա.Թ.Գրիգորյան/

4. «Տավուշի մարզի լանդշաֆտների արդի վիճակը և էկոլոգիական բարելավման ուղիները» գիտական զեկուցում

/զեկ. Էլմիրա Վարդանյան/

5. Ընթացիկ հարցեր

Ընթացիկ հարցերում առաջրկվեցին հետևյալ հարցերը՝

5.1 Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի հաստատում

/զեկ. Վ. Մ. Մանուկյան/

5.2 Ֆակուլտետի նախկին աշխատակիցներ աշխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Մաքսիմ Մանասյանի և աշխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Թրահել Վարդանյանի կողմից գրագողության փաստի քննարկում

/զեկ.դեկան Մ. Ա. Գրիգորյան/

Նիստի օրակարգը հաստատելուց հետո

1. **ԼՄԵՅԻՆ.** Փոխդեկան Ս.Քելյանի հաղորդումը 2022/2023 ուստարվա 1-ին կիսամյակի քննությունների կազմակերպման վերաբերյալ: Նա ներկայացրեց քննաշրջանի և

լուծարքային շրջանի ժամանակացույցը: Նշեց, որ քննաշրջանի ընթացքում խնդիրներ և միջադեպեր չեն արձանագրվել: Քելյանը նշեց նաև, որ ֆակուլտետը բավականին բարձր ցուցանիշ է գրանցել ուսման վարձի վճարման առումով: Խոսեց նաև հետազոտական բաղադրիչ պարունակող դասընթացների վերաբերյալ և սահմանված ձևաչափով հաշվետվությունների ներկայացման մասին: Նշված առարկաների քննություններն անցկացվել են բարձր մակարդակով ինչը արձանագրել են նաև քննության ընթացքին հետևող ռեկտորատի ներկայացուցիչներ: Ս.Քելյանը ներկայացրեց նաև ռեկտորատի կողմից ներդրված պիլոտային ծրագրի մասին, այն է՝ մագիստրատուրայի դասընթացներից 0 միավոր ունեցող ուսանողները կրկին մասնակցելու են նշված դասընթացին և վերահանձնման հնարավորություն կստանան:

**ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.** Ուսանող Ս.Սահակյանն առաջարկեց դեկանատին քննություններին չթույլատրված ուսանողների ցանկը նախօրոք ավագներին տրամադրել՝ առաջացած խնդիրները ժամանակին շտկելու նպատակով:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն:

## 2.

**2.1 ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ պրոֆ. Վ.Պ.Վարդայանի հաղորդումը «Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց անվանական կրթաթոշակի հավակնելու կանոնակարգը, ինչպես նաև առաջադրված թեկնածու՝ «Երկրաբանություն» մասնագիտության «Երկրաֆիզիկա, ճարտարագիտական երկրաբանություն և ջրաերկրաբանություն» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող **Մարինե Արթուրի Բանգոյանի** ներկայացրած փաստաթղթերը, ով դիմել է **«Սողանքագիտություն և ինժեներային երկրաբանություն»** ուղղվածության մրցույթին մասնակցելու:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 28, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0 «Երկրաբանություն» մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող **Մարինե Արթուրի Բանգոյանին** երաշխավորել **«Սողանքագիտություն**

և **ինժեներային երկրաբանություն»** ուղղվածության «Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

**2.2 ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ պրոֆ. Վ.Պ.Վարդայանի հաղորդումը «Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի անվան կրթաթոշակ նշանակելու վերաբերյալ: Նա մանրամասնորեն ներկայացրեց անվանական կրթաթոշակի հավակնելու կանոնակարգը, ինչպես նաև առաջադրված թեկնածուների՝ «Երկրաբանություն» մասնագիտության բակալավրի 4-րդ կուրսի ուսանող **Թամարա Գևորգի Համբարձումյանի** և «Աշխարհագրություն» մասնագիտության բակալավրի 3-րդ կուրսի ուսանող **Անահիտ Մեխակի Մկրտչյանի** ներկայացրած փաստաթղթերը, ովքեր դիմել են «**Բնապահպանություն»** ուղղվածության մրցույթին մասնակցելու:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ.** դոց.Ա.Հ.Պոտոսյանը, պրոֆ.Ս.Հ.Հայրոյանը իրենց ելույթում նշեցին ուսանողների գիտական պոտենցիալն ու կարողությունները: Առաջարկեցին հիմք ընդունել թեկնածուների ՄՈԳ-ը և հասարակական ակտիվությունը: Նշվեց նաև այն հանգամանքը, որ, ի տարբերություն Անահիտ Մեխակի Մկրտչյանի, Թամարա Գևորգի Համբարձումյանն ունի տպագրված գիտական հոդված:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 15, ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝13 «Երկրաբանություն» մասնագիտության բակալավրի 4-րդ կուրսի ուսանող **Թամարա Գևորգի Համբարձումյանին** երաշխավորել «**Բնապահպանություն»** ուղղվածության «Գեորգի Տեր-Ստեփանյան»-ի անվան կրթաթոշակ հատկացնելու:

**3. ԼՄԵՑԻՆ.** Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ **դոցենտ Ա.Թ.Գրիգորյանի** հաշվետվությունն ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ (հաշվետվությունը կցվում է):

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան Մ.Ա.Գրիգորյանը նշեց, որ ամբիոնը մեծ դեր ունի աշխարհագետ մասնագետներ պատրաստելու հարցում: Ամբիոնում դասախոսում են հանրապետության լավագույն մասնագետները և առաջարկեց

ամբիոնի վարիչ դոց.Ա.Գրիգորյանի ներկայացրած հաշվետվությունը գնահատել բավարար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոցենտ Ա.Թ.Գրիգորյանի ներկայացված հաշվետվությունը և ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել բավարար:

**4. ԼՄԵՑԻՆ.** Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի նախկին ասպիրանտ **Էլմիրա Վարդանյանի** գիտական զեկուցումը **«Տավուշի մարզի լանդշաֆտների արդի վիճակը և Էկոլոգիական բարելավման ուղիները»** (ԻԴ.03.01 «Աշխարհագրություն») թեմայի վորաբերյալ:

**ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.** դոց. Մ.Ա.Գրիգորյան - 1) Ո՞րն է թեմայի նորույթը և արդիականությունը:  
2) Ի՞նչ ժամանակահատվածի համար եք հաշվարկել գլոբալ փոփոխությունները:

**պրոֆ.Պ.Ս.Էֆենդյան** – Էկոլոգիական բարելավման ի՞նչ ուղիներ եք առաջարկել:

Բոլոր հարցերին Էլմիրա Վարդանյանը տվեց հանգամանայից պատասխան:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**պրոֆ.Հ.Սայադյանը /գիտական ղեկավար/** – Շնորհակալություն հայտնեց հարցերի համար, ինչն ի օգուտ ասպիրանտի է: Ներկայացված աշխատանքը արդի է, թեման գիտական հետաքրքրություն ունի, ստացված արդյունքը՝ նույնպես: Գրականության մեջ բավականին լավ վեր են լուծված հարցերի տեսքով բարձրաձայնած խնդիրները: Աշխատանքը բավարարում է թեկնածուական աստիճանի ներկայացվող պահանջներին և առաջարկեց երաշխավորել ներկայացնելու հրապարակային պաշտպանության:

**դոց.Ս.Ռ.Սուվարյան.** Նշեց, որ աշխատանքը բավականին հետաքրքիր է, սակայն առկա են խնդիրների մոտեցման թերություններ և առաջարկեց մեթոդաբանության մեջ կատարել որոշակի փոփոխություններ: Ելույթի ավարտին դոց. Ս.Սուվարյանն առաջարկեց «լանդշաֆտ» տերմինը փոխարինել «երկրահամակարգ» տերմինով:

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ.** դոց.Մ.Ա.Գրիգորյանը առաջարկեց **Էլմիրա Վարդանյանի** **«Տավուշի մարզի լանդշաֆտների արդի վիճակը և Էկոլոգիական բարելավման ուղիները»**

(ԻԴ.03.01 «Աշխարհագրություն») վերնագրով աշխատանքը երաշխավորել մասնագիտական խորհրդում հրապարակային պաշտպանության:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Էլմիրա Վարդանյանի «Տավուշի մարզի լանդշաֆտների արդի վիճակը և էկոլոգիական բարելավման ուղիները» (ԻԴ.03.01 «Աշխարհագրություն») վերնագրով աշխատանքը երաշխավորել մասնագիտական խորհրդում հրապարակային պաշտպանության:

## **5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ**

**5.1 ԼՄԵՑԻՆ.** Դոց. Վ.Ս.Մանուկյանի հաղորդումը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի վերաբերյալ 01.01.2023-31.08.2023 ժամանակահատվածի համար (ծրագիրը կցվում է):

**ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.** Ուսանող Լ.Մուրադյանը, պրոֆ., պրոֆ.Պ.Էֆենդյանը առաջարկեցին զարգացման ռազմավարական ծրագրում ընդգրկել համապատասխան մասնագիտություններում կայացած մասնագետների և ուսանողների փորձի փոխանակման գործընթաց, կազմակերպել մասնագիտական դասընթացներ, մասնագետներ հրավիրել դասախոսություններ կարդալու համար:

**ԵԼՈՅԹ ՈՆՆԵՑԱՆ.** Դեկան Մ.Ա.Գրիգորյանը մասնավորապես խոսեց ռազմավարական ծրագրի կարևոր կետերից մեկի՝ շրջանավարտների բազայի ստեղծման վերաբերյալ: Նշեց, աշխատանքի ծավալուն լինելու մասին և կոչ արեց ամբիոնի վարիչներին, դասախոսներին ակտիվ մասնակցություն ցուցաբերել բազայի ստեղծման հարցում:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել ֆակուլտետի զարգացման ռազմավարական վեցամսյա ծրագիրը:

**5.2. ԼՄԵՑԻՆ.** Ֆակուլտետի դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը Ֆակուլտետի նախկին աշխատակիցներ աշխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մաքսիմ Մանասյանի և աշխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Թրահել Վարդանյանի կողմից գրագողության փաստի վերաբերյալ: Խորհրդի անդամներին ներկայացվեց Ֆակուլտետի նախկին աշխատակիցներ աշխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մաքսիմ Մանասյանի և աշխ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Թրահել Վարդանյանի գիտական հոդվածներում, մենագրություններում և դասագրքերում գրագողության

փաստերը, ինչը հաստատվել է Մասնագիտական հանձնաժողովի և ԵՊՀ Էթիկայի հանձնաժողովի կողմից: Ջեդարարի և գրագողի վարքագիծ դրսևորելու համար Մ.Մանասյանը ԵՊՀ ռեկտոր Ա.Սիմոնյանի կողմից ստացել է նկատողություն և որպես գրագող դադարեցրել աշխատանքային պայմանագիրն ու ազատել աշխատանքից: Թ.Վարդանյանի գրագողության փաստը քննարկվել է ԵՊՀ Էթիկայի հանձնաժողովի կողմից և հաստատվել է, որի արդյունքում ռեկտոր Ա.Սիմոնյանը մերժել է ամբիոնի վարիչի մրցույթին մասնակցելու Թ.Վարդանյանի դիմումը՝ մակագրելով «գրագողին չեմ թույլատրում մասնակցելու մրցույթին»: Հետագայում Թ.Վարդանյանը չի ընտրվում ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում և ազատվում աշխատանքից: Մ.Մանասյանի և Թ.Վարդանյանի գրագողության բոլոր նյութերը գտնվում են ԵՊՀ ռեկտորատում և ֆակուլտետում: Անցած հինգ տարիների ընթացքում Մ.Մանասյանի և Թ.Վարդանյանի կողմից գրագողության փաստը չի բողոքարկվել: Ելնելով նշվածից՝ առաջարկում եմ դիմել ԲՈԿ Մ.Մանասյանի և Թ.Վարդանյանի ԲՈԿ-ի կողմից տրված գիտությունների դոկտորի և պրոֆեսորի վկայականները որպես գրագող համարել անվավեր:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝27, ՁԵՌՆՊԱՀ՝ 1, ԴԵՄ՝ 0, դիմելու ՀՀ ԲՈԿ Մ.Մանասյանի և Թ.Վարդանյանի ԲՈԿ-ի կողմից տրված գիտությունների դոկտորի և պրոֆեսորի վկայականները համարել անվավեր:

**Խորհրդի նախագահ**

**Մ.Ա.Գրիգորյան**

**Խորհրդի քարտուղար**

**Ե.Ս.Մանուկյան**